


ՅԵ. ԳԱՐԵՎԱՆ

ԺԱՌԱՄԵՐԻ ՔԱՂԱՔ

ՎԻՃ




1936

ՍԱՄՎԵԼԵՎՈՒԹ

891.99
4-19

891.99 01 JAN 2009 08 DEC 2011
4-19 *այ*

ՅԵՐՎԱՆԴ ԳԱԼՃՅԱՆ



ԲԱՐԴԻՆԵՐԻ ՔԱՂԱՔ

Գիպակ

Ս Ա Բ Շ Ե Լ Գ Ա Մ Ւ Ի
ԹԻՖԼԻՍ

1936

12 MAR 2013

Պատմութեալ Ա. Առաքելյան
Տեսական պատմութեալ Ա. Մարտիրոսյան

24653

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Նրանք անբաժան ընկերներ են, վոր ժպտում են իրար այնպես, ինչպես միևնույն վոստից կախված կարմիր կեռասները:

Ամեն տարի, յերբ խտանում են բարդիների սաղարթները, հասունանալ ե սկսում Ոսմանենց թթենին, վորն ամբողջ մեջքով հենված ե Սեթենց բակի պատին:

Լայնածավալ թթենու ստվերումն ե գտնվում Ոսմանենց սաքուն, վորին ամեն որ, նույն պահին՝ կեսորը յերկու ժամ անց մոտենում ե նրա տատը՝ Թառյան բաղին: Նա, սուրճի «ջեղվե»-ն ու «Փինջան»-ը ձեռքին, սպիտակ նման որորվելով, դալիս-կաղնուում ե նույն տեղը և ձայն տալիս.

— Գյոհա՛ր, ա՛յ աղջի, քիրմանշահո բե՛ր, շո՛ւտ...

Յեթ քիչ անց այգու փոքրիկ դռնից դուրս ե դալիս ութ-տաս տարեկան, մանկական իրանը չթե հասարակ չորի մեջ ձիգ պրկած մի աղջնակ ու փոքրիկ մի դորդ խտած՝ զեսի սաքուն շտապում: Գյոհարն իր բեռը տատին հանձնելուց հետո, վազում ե յետ՝ ողնելու մորը ճաշի և այլ դորձերում:

Թարան բաջին «քիրմանշահ»-ը խնամքով փառում է կանաչին և ուղտի գանդաղիստությամբ ծայտապատիկ տեղափորվում վրան: Նա բազմածալ չորերի տակից դուրս ե բերում ծխախոտի ու տումիւ, ցուցամատը մի յերկու անգամ կափարիչին խփելով, բաց անում, խնամքով մի գրանակ փաթթաթում, հաստատում սաթե ծխամորճի ծայրին, դնում բերանը, վատում և ծուխը մեծ բավականությամբ դուրս փչում

1649
39

Краснознаменная тип. им. А. Ф. Мясникова
Изд-ва „Заря Востока“.
Тифлис—1936 г.

Քթածակերից : Դրան հաջորդում ե սուրճի առաջին
կումը :

Նոյն այդ պահին այգու կարձ ճանապարհով
դպրոցից վերադառնում ե Ռոմանը : Նա, առանց տուն
ժանելու, դունավոր թաշկինակի մեջ կապած զբքե-
րը գցում ե տատի զոգը, կատվի ճարակությամբ մա-
րդցում թթենու բունք ի վեր և բակի պատին հա-
վասարվելուն պես, կանչում .

— Սեթ, ա'յ Սեթ...

Սեթն իսկույն դուրս ե թոշում տնից, վազում
գեղի բակի պատր, հասնում—պինդ բոնում թթենու
կախ ընկած ճյուղերը և վոտները պատին դեմ տա-
լով, վայրինապես ըարձանում ե ու մի բոսկ հեծ-
նում պատին : Ապա նրանք միասին մագլցում են ծա-
ռի վերին ճյուղերը՝ արևահաս թութ վորսալու : Սա-
րյակներն ու ճնճղուկները, նրանց ներկայությունից
դժոհ, աղմուկով խույս են տալիս թթենուց և կող-
քի բարդու սաղարթներում տեղափորվելով, փոքրիկ
կտուցները տոտիկների տակի ճյուղերին են քսում-
ասես զանակ լինեն սրելիս :

— Ճղները չթափե՞ք, — գլուխիր Սեթ բարձրաց-
նելով, կարգադրում ե թառլան բաջին և շարունա-
կում «թաղրեհ» քաշել :

Սեթն ու Ռոմանը տարիների ընթացքում փոխա-
դարձարար սովորել են իրար յեղուն : Նրանք ուսում-
նում կատակում՝ պատմելով իրենց տեսածի ու լսո-
ծի մասին :

Յեկ այդպես թիթեների նման անցնում են
նրանց որերը :

— Սեթ, գիտե՞ս ի՞նչ... եսոր խոջեն ինձ Փա-
րախիա դրեց, — մի անգամ հայտնում ե Ռոմանը.
Սեթին, յերբ թութ ուտելուց հոգնած՝ նստել ելին
ճյուղերի արանքում հանդսատանալու, — յամա՞ն բան
եր, Սեթ, յամա՞ն... Հայտ վոտներս կմղմզան ցա-
վից :

Ռոմանի աչքերը վերազարդնած հուզումից իոնա-
վանում են ինչ-վոր...

— Մեր վարժապետները Փարախիա-մարախիա-
շիբուն ինչ բան ի... թե չե՛ վո՞վ վարժատուն կեր-
թա : Մենք իսկ հայրան չենք, վոր նալեն...

— Ելնեկ ձեղ : Մեր խոջեն են տեսակ կատղուի
բան ի, վոր վո՞վ կանա ձեն հանե...

— Էնչի՞ չե՛, մինչև ուժով շանց չտան, քեզ մարդ
հետար չեն անե : Թե վոր խոջեն մեկ ել Փարախիա ու-
ղի գնել, զուռը բաց ու փախի : Ի՞նչ պիտի անի
վոր... — ընկերական մտերմությամբ խորհուրդ ե տա-
լիս Սեթը :

Ռոմանը ժպտում ե այդ հանդուզն մտիր առթիվ,
և նրա գեմքը լեցվում ե զարնանային անձրկից հետո
բացվող յերկնքի պայծառությամբ :

Այդ որվանից Ռոմանը ու Սեթի մտերմությունն
ավելի յե խորանում :

Յերբ նրանք հազեցած են լինում թլից, Սեթն
Ռոմանի հետ հաճախ իջնում ե նրանց այգին, և միա-
մին զնում են այգու ծայրը՝ լողանալու գետում, վոր
կշկչարով հոսում ե ուսենիների տակով : Նրանք, հա-
նելուն պես, հանդում են և զորտի նման նետվում
ջուրը :

Սակայն մեկ ել տեսար՝ հեռվից լովեց Ռոմանի
փոքրիկ քրոջ՝ Գյոհարի սուր ձայնը.

— Ռոմա՞ն, ա'յ Ռոման, սուրբեն հազըր ի, ա-
րե՛...

Դրա վրա Ռոմանն ու Սեթը դուրս են թոշում
գետակից, չորերն արագ-արագ հազնում, այգու պա-
տից ներս ցատկում և վազում զեղի տուն : Ռոմանից
բաժանվելուց հետո, Սեթը հասնում՝ գրկում և թթե-
նու բունը, մի ակնթարթում հավասարվում պատին և
ապա՝ ճյուղերը բռնելով, սահում-ընկնում իրենց
քակը :

տե, բայց, ավելի շուտ, սիրում են նայել ուրիշների
խաղին և դիտողություններ անել՝ մեկ սրան, մեկ
նրան։ Թառլան բաջին Փռուցնելով ներս և քաշում ու
սուրճը և, որինակ, կարգադրում։

— Ողուզ, դյուշաշ թալ, տեսնամ...

կամ՝
— Ակո, ջւարի դուռը մի՛ բանա, յալրում, մի՛

բանա...

Խաղացողները տեսնելով, վոր դիտող կա, ել ա-
վելի յեն վոգեվորվում՝ առանց, սակայն, հաշվի առ-
նելու թառլան բաջու կարծիքը։

Շյուքրին պայտար ե և քաղաքի յետ ընկած չու-
կաներից մեկում վոքրիկ մի արհեստանոց և պահում։
Նա ինքն է շինում պայտարը, ինքն ել պայտում հա-
ձախորդների ձիւրն ու յեկները։

— Սանահաթս ծանդր ի, Ակո, սհաթներով կրա-
կի դիմաց... Զերս ել տաս փարա չի մնահամ խեղ-
ճութեն, հա՛ պարտք, որ չի ընցնե, վոր մի խինդիւնց
փոլիսի, յա թե զարթիկ ձիու վուներն անփարա չը-
նալիմ, — հաճախ Արարաջի Ակոյին դանդասփում ե
նա։ Նրա մեջքը զնդանի առջե տարիներ շարունակ
աշխատական կորացել է սալու և սալու միաժամանակ՝
սկսում զարսել նարդու քարերը։ Դրա վրա ճոռում է
հարեան տան գուռք, և գուրս ե գալիս Ռսմանի հայ-
րը։ Նարանդ Շյուքրին։ Նա սուս ու փուս գալիս-
նառում ե իրեն հատկացված աթոռակին։ Յեկ այս-
պիս սկսվում ե նարդու խաղը, վորը հաճախ ժամեր
և տեռում։ Նման որերին մոտ է գալիս թառլան բաջին։
Նրա կարգադրությամբ Գյոհարը նախապես դուրս է
բերում հայտնի «քիրմանշահ»-ն ու իրիկնարին սուր-
ճի սկարագաները և տեղավորում խաղացողների կող-
քին։

Այդպես է թառլան բաջին։ Նա թեհ խաղալ զի-

— Իսկ իմ սանահաթս չա՛տ շիքյար բան ի. աղե-
քին արարաջութեն անելով, ջանս հալ ու մաշ ե-
քին արարաջութեն անելով, ջանս հալ ու մաշ ե-
քին արարաջութեն անելով, ինչ ի, վորինոց սովորի փը-
րանքները, — ցավակցում ե Արարաջի Ակոն։

— Ալ, Փալա՛դ, Փալա՛դ, քիմընե զավուն յե-
կրբըրան, քիմընե գյուլեդ, — վիլիսովիայում ե Նար-
բանդ Շյուքրին։

ՄԱՆՐ ԿՈՐՈՒՏԸ

Այդ որն Ոսմանը չերեվաց թթենու վրա։ Յեզ
Սեթը, նրա կանչին յերկար սպասելուց հետո, բարձ-
րացավ իրենց խրճիթի կոուրը՝ ստուգելու, թէ նո-
ոյդումը չե՞ արդյոք։

Սեթն աչքը չորս բացած՝ նայեց այդու շուրջ բո-
լորը, թափանցեց, նույնիսկ, ծառերի սաղարթները և
տիուր ու կարոտալի մի հայացք գցեց թթենու ծառ-
բարեն ջուղերին... Նա պատրաստվում եր ցած իջ-
նել կարից, յերբ հանկարծ լսեց, վոր մեկը կանչում
և իրեն թուրով աղայի պատշաճրից։

Սեթը շուռ յեկավ... Վարդանն եր՝ Խոսրով ա-
ղայի փոքր տղան։

— Ի՞նչ կանես, սպասի՝ դամ խաղանք։

— Թէ կուզես, արե, — կիսակամ համաձայնեց
Սեթը։

Բայց նույն այդ բոսկելին պատշաճր ընկալ
Վարդանի մալրը՝ թագուհի խանումը ու ձիգոտի
հարժաների տակ ներս քչեց վորուն։

Սեթը պարզ յուռմ եր, թէ ինչպես հարվածների
հետ դուռմ և թագուհի խանումը։

— Յես քեզ խազար անդամ չեմ ասե, վոր մեզ
գյորա մարդու տղի հետ ընկերութեն անես, հը...
Արաբաշու տղեն վիր շունն ի, հը... Եւ կանե՞ս, եւ
կանե՞ս...

— Վա՛յ, վա՛յ... Եւ չեմ անե, եւ չեմ անե, —
լացակումած պատասխանում եր Վարդանը։

Սեթի համար նորություն չեր այդ պատկերը։

Մի անգամ Վարդանը ծածուկ իրենց հետ յեկել եր
զետը լողանալու։ Սակայն մայրը տղի դեմքից իս-
կույն հասկացել եր բանի եյությունը և ամուսնու՝
Խոսրովի աղայի հետ միացած՝ այնքան եյին ծեծել,
վոր յերեք որ եր՝ չեր անցնում ապտակների հետքե-
քը։

Այդ եր պատճառը, վոր Սեթի վերաբերմունքի
մեջ դեպի իր հոր տերերը՝ վախի և ակնածանքի
հետ, մի աւսակ ատելություն ու զգվանք ել կար...
Յետ Վարդանը Սեթին փողոցում հանդիպելիս,
թեև մեկ-մեկ մոտենում եր նրան, բայց չկար այն
ընկերականությունը, վորին Սեթը վարժվել եր Ու-
ժանի հետ անցկացրած տարիների ընթացքում։ Վար-
դանը սիրում եր կարդադրություններ անել և, առ-
հասարակ, վերից-վար նայել «աղքատ»-ներին. մի
բան, վոր յերեք զուր չեր դալիս Սեթին։

«Ախսոս չի՛ Ոսմանը», — յեղրակացրեց Սեթը և
դուրս յեկավ փողոց՝ մենակության ձանձրույթը փա-
րատելու։

Փողոցում հունիսյան գաղջն եր նստել։ Անցու-
դարձ գրեթե չկար փողոցում. մեկ-մեկ թուրք իշա-
պաններն եյին յերեսում, վորոնք լիքը կողովներով
բանջարեղեն եյին կըում իրենց բոստաններից և մեկ
ել՝ 8-10 տարեկան մանուկներ, վորոնք մերկ ու թաց
ձիերի մեջքերին կօպած՝ քառատրոփի վերաբանում
եյին գետից։ Այդ աղմուկի վրա, այս կամ այն դուռն
սպակը սահսափահար դուրս եյին հանում գլուխներն
իրենց փետուրքերի միջից և ճերմակափայլ թևերը
թափահարելով, լեցվում կողքի առվակը. նրանք դե-
ղին կտուցները լայն բացած՝ կոկուրով աշխատում
եյին իրարից խլել սահսանքների տակ մտնելու առաջ-
նությունը։

Սեթն անորոշ ու դանդաղ քայլերով կտրեց իրենց
փողոցը. հասավ հրապարակը և, այն ե, ուղում եր
մտնել հարիսան նրբափողոցը (ուր վորեւ ընկերոջ

Հանդիպելու ավելի հնարավորություն կար), յերբ գիմացի անկյունում հայտաված մարդկանց խումբը նրա ուշադրությունը դրավեց:

Սեթը վաղեց-հասալ, մարդկանց արանքից մի կերպ անցնելով, մտավ մեջտեղը և ի՞նչ տեսավ. Ոսամանը բորբոքված այտերով ու կարմրած աչքերով ընկել և գետնին, մեջքի վրա և վոչ մի կերպ չի ուզում յենթարկվել իրեն հասակակից յերկու ուրիշ տղաների, վորոնք նրա ձեռներից ու փոտներից բոնած՝ ամեն կերպ աշխատում են քաշելով ուր-վոր տանել...

Երջապատող անցորդներն աքլորակուիլ դիտողի լարվածությամբ նայում են ակնապիշ, և նրանցից վոչ մեկը չի ել մտածում միջամտելու մասին:

— Զե՞մ դա, ու՞ղ եղեք, մեռնեմ՝ չե՞մ դա, — մի դրսիս իր մայրենի լեզվով բղավում եր Ոսմանը և ձեռներն ու վոտները թափահարում:

Սեթը մի քանի ըրապե ինչ անելը չիմացավ. քարացել-մնացել եր: Սակայն տեսնելով, վոր Ոսմանի ձայնն արգեն խզվում է, սթափիկ հանկարծ, վրա պրծավ և, ինչպես այդ տարիքի տղանելը զիտեն անել, ցատկեց Ոսմանին չարչարողներից գլխավորի մեջքին և մեկ ձեռքով նրա աչքերը պինդ փակելով, պոկեց նրան Ոսմանից ու գլորեց գետնին: Անակնարի հաղթահարելու համար, մյուս տղան, Ոսմանին թողնելով, պատրաստվում եր հարձակվել Սեթի վրա, յերբ Ոսմանը ճարպկորեն փոտքի ցատկելու ու մի խոշոր քար գետնից վերցնելը մեկ արավ:

Անցորդների հետաքրքրությունն ել ավելի վառվեց. Նրանք յետ-յետ քաշվելով, շրջանը լայնացրին, վորպեսող քարակովից իրենց վնաս չհասնի:

— Ու՞ղ եղեք, թե չե՞ կատկցուցեմ...

Այդ բողեյին Ոսմանի դեմքին նայողը և վոչ մի բոպե չեր կարող կասկածել, թե կարող ե չկատարել սպառնալիքը:

Սեթն անցավ Ոսմանի կողմը, մի քար ել ինքը

վերցրեց և առանց հասկանալու, թե ինչո՞ւ յե տեղէ ունենում այդ բոլորը, իր հերթին սպառնաց.

— Ձե՛ռ քաշեք, թե չե՞ կիոշմանեք...

Տեսնելով, վոր վոչ Ոսմանն է կատակում, վոչ ել ընկերը, հակառակորդները թողին և կամաց-կամաց հեռացան: Նրանցից մեկը մի յերկու քայլ անելուց հետո, չուռ լեկավ թե՝

— Վերջը, Ոսման, դժուա փիս կելնի, խոջի ձեռքից չես աղատմիի...

Ոսմանը քարերը գցեց և սկսեց թափ տալ փոշուած շորերը: Հետո նա գետնից վերցրեց գրքերի կապոցն ու ֆեսը, մի բոպե հանձնեց Սեթին, մոտեցավ առվակին, ձեռքերն ու վոտները լվաց, և ասո՞ նրանք միասին մտան իրենց փողոցը:

— Ասա՛, գե՛, ասա՛ Ոսման, ի՞նչ խարար եր...

Սակայն հուզումը փորպես ոձ փաթաթվել եր Ոսմանի կոկորդին և այնպես եր հուզ տալիս, վոր նա բավական ժամանակ վոչ մի բառ չեր կարողանում արտասանել:

Սեթն խկույն զդալով նրա նուրբ գրությունը, եր չպնդեց: Նրանք անխոս անցան զրեթե ամբողջ վողոցը:

— Ե՛, Սեթ, Սեթ, փի՛ս բան ելավ, — վերջապես զողոց ձայնով հայտնեց Ոսմանն իրենց տանը հավասարվելիս: Այստեղ հուզման ոձն ասես խեղեց վասարպելիս: Այստեղ հուզման ոձն ասես խեղեց վասարպելիս: Նա այլևս չկարողացավ շարսնակել, անող ու խիստ ճնշված հայցքով նայեց Սեթին եւ դյուխը կախ բարդիների արանքով ծանրաքանչ շարժվեց զեսպի իրենց տունը: Մի յերկու ըովեյից նա ներս եր մտնում կիսարաց դռնից:

Սեթը բավական ժամանակ շվարած կանդնելուց հետո մեքենալորեն առաջ անցավ. ինչո՞ւ «փիս բան ելավ, ե» կրկնում եր նա մտքում և վոչ մի կերպ չեր կարսղանում գտնել պատճառը:

Այդ որը նրանց հայրերը նարդի չխաղացին բար-

Հիների արանքում : Խակ հաջորդ որը, յերբ նստացին սեղանաձև կտրված թնի շուրջը, նարդու քարերը շարված մնացին ամբողջ յերկու ժամ, մինչև վոր Նալբանդ Շյուքրին վերջացրեց իր պատմությունն Ոսմանի մասին : Յեկ յերբ նրանք զցեցին առաջին զարը, նկատեցին վոր մուժն արդեն նստել եր : Այդպէս եւ, առանց նարդի խաղալու, վեր կացաւ հարեւանները :

Քնելու ժամանակ Սեթը հորից տեղեկացավ, վոր Ոսմանը, հրաժարվելով խոջայի կարգադրած Փալարիկային յենթարկվելուց, փախչում և դպրոցից : Դաշտաղած խոժան խոկուն յերկու ուժեղ աշակերտի վաղեցնում և Ոսմանի յետեկից՝ հրամայելով, վոր, ինչ գլուխ ել լինի, յետ բերեն «անհնազանդին» : Սակայն Ոսմանին աջողվում և ազատիւն նրանց հետապնդումից Նույն յերեկոյան խոժան դալիս և Ոսմանենց տուն և խիստ վրդովված պատմում ամեն ինչ . նա Ոսմանի այդ քայլը համարում և «շարիաթի որենքների վոտնահարում» և պահանջում արժանի պատիժ... Դրա վրա արյունը խփում և ծերունի Շյուքրու գլուխը . նա խոկուն վեր և ցատկում, խուրջինի միջից հանում ծուրճը և հարձակում, վոր տեղն ու տեղը սպանի տղին... Վրա յեն հասնում մայրն ու տատը, Ոսմանին մի կերպ ազատում դապաղած հոր ճանկերից և հենց նույն գիշերը հարմար ճամբորդների հետ ուղարկում Ստամբուլ՝ Ոսմանի մորաքրոջ մաս :

«Վա՞խ, ի՞նչ արի,, յե՞ս եմ պատճառը, ինչո՞ւ խելք սովորեցուի, վա՞խ», ինքն-իրեն հանդիմանեց Սեթը : Նրա աչքերը խոնարխացա՞ն, թացվեցի՞ն...

— Ոսմա՞ն, Ոսմա՞ն, — մեղմ շնչացին Սեթի շրմները, վորոնք դողում եյին անզուսոյ :

ՍԱՀՈՒՄ ԵՆ ՍԱՀՆԱԿՆԵՐԸ

Այդեստանը տնքում և ձմեռվա բեռան տակ : Բարդիների ճուղերին կիտված ձյան գնդերը մերթ այտեղ, մերթ այնտեղ, մեկ եւ տեսար-պոկվում են հանկարծ ու թըրի՝ ընկնում գետնին, կամ տակից անցնող անցորդից գլուխին : Տղամարդկանց բեկերին ու հոնքերին յեղյամն այնպես և նստել, ասես գրիմ արած ծերունիներ լինեն : Ազուաները ցուրտ ողում իրաց յետե ընկած՝ կոկոսում են աղմկում, թե ինչ եւ թագցրած ընկույզ են հայտնաբերել, կամ ինչ-վոր խոհանոցի պատի տակի աղբանոցից վոսկոր փախցրել : Իսկ թափառական չները, վոսկորոտ կողերով՝ պոչները ներս քաշած . ծուլորեն հածում են առվակների յեղերքին և յերեւմն զնչով ու առջեկ թաթերով փորփում բյուրեղացած ձյունը...

Զմեռվա այդի խորը կեսին Խոսրով աղայի ապարան քը մեծ իրարանցման մեջ եւ . Վարդանի տոնախմբության նախապատրաստությունն են տեսնում : Պետք և հիմնովին մաքրել դահլիճն ու առանձին հյուրասենյակները : Թագուհի խանումը գլուխին մետաքսե թաշկինակ կարպած՝ հոլի նման պատփում և սպասուհիների և մշակների շուրջը : Նրա՝ առանց այն ել ճակընգի պես կարմիր դեմքն այնպես և շիկնել, վոր առես, ուր վոր եւ, այտերը պիտի պայտիթեն արյան ճըշշումից :

Աչքի Մկոն և իր ողնականները մաքրել ու խոհանոցի յուղ ծծած սեղանին են գցել յերկու չաղմկ

դառ, մի քանի հայկահամալ ու փափլիկ կաքավների մի բըլուր՝ հատկապես փլավ պատրաստելու համար:

Փայլուն, ուղին մեջքերով պղնձե կաթսաները բլթքլթում են յայնածավալ ոչախին, իսկ Աշչի Մկոն սպիտակ զգակը զլիխին վողեռությունից զրեթե պարում ե այդ բոլորի առջև. նա, ինչպես միշտ, այս անդամ ել «բաշխիչ»-ի մեծ հույսեր ունի: «Մաշալլա, մա՛շալլա, քերարդ հրաշալի՛ յե... ճակատդ մոռացուր, նայեմ — յերեակայում ե Աշչի Մկոն. նրան թվում ե, թե ինքը, նույնիսկ, վոսկիների հնչյունն ե լսում: Յեկ յերբ Մկոն դառներից մեկն առջնն ե քաշում կարատելու, նրա խոզանականման բեխերը թըրթուալ են սկսում չմթների հրճլանքից:

Մեծ դործի վրա յե և Արարաջի Ակոն. նա Խոսքով աղայի հատուկ կարգադրությամբ և բանավոր ցուցակի համաձայն, մեկ առ մեկ փոխադրում ե այն ընտանիքները, փորոնք սեփական սահնակ ունենալու չափ զեռ չեն աղայացեր: Կես ժամ անդամ Խոսքով աղայի ընդպարձակ բակն և մտնում սե նժոյլիներ լը-ծած զորդապատ, կարմրաներկ սահնակը, վորից իջնում են թափիչ վերարկուների մեջ պրրե-ված խաթուններ, խանումներ: Նրանց յետե-վից նազանքով ցած են գալիս գեռահաս աղջիկ-ներ, յերկար հյուսած մաղերով, վորոնց վրա տմ-րացված ե լինում գունավոր մետաքսե լայն ժապա-վենից կապած թիթեռաձև մի հանգույց:

Արարաջի Ակոյի վարած սահնակից զատ, Խոսքով աղայի բակն են մտնում նաև քաղաքի՝ «աշխարհ տե-սած» մեծահարուստների սեփական սահնակները, վո-րոնցից արդեն գուրս են գալիս կիսաերոպական տա-րադով, վետրամիսր թեք դրած դիմարկով տիկիններ և թափչե գլխարկներով աղջնակներ՝ նույն հյուսած մաղերը ծոծրակներից կախ և նույն գունավոր թի-թեռաձև հանդույցները մաղերի հյուսերին:

Կանանց փոխադրությունը տեսում ե մինչև ժամը

8-ը, գորից հետո Խոսքով աղայի բակն սկսում ե ըն-դունել շուկայից նոր վերապարձած տղամարդկանց: Նրանք, անխափիր, հատկապես այդ տռիվ առթիվ մա-քուր ածիլվել են ու բեխերը անկել՝ վոմանք դամփոկ պոչի պես վորորուն, վոմանք ել հորիզոնական դիր-քովլ - սլաքի պես ձիու ու սուրը:

Տղամարդկանց խմբերին միացել են նաև տղանե-րը, գլխավորապես Վարդանի ընկերները՝ բոլորն ել նեղ ու յերկար շալվարներով, կաղապարից նոր հա-նած ալ ֆեսը գլխներին:

Վարդանը՝ որվա «Հերոսը» կապույտ մահուբէց կարած տոնական յորերը հաղին, մանկական վիզը բարձր, ուրայած ոճիքի մեջ խեղդած, շուտ-շուտ ներս ու դուրս ե անում և աշխատում, քանի գեռ ցուրտը չի կծում, մնալ պատշգամբում, վորպեսովի կա-րողանա իր արտաքինով «զարմացնել» Սեթին: Թա-գուհի խանումն արտոնել է Սեթին՝ այդ որը բարձ-րանալ իրենց տան վերին հարկը, սակայն միայն ընթ-րիքի ժամանակ, փորովհետև դրանից առաջ կարող են նոր հյուրեր գալ և «ինչ կասեն, թե տեսնան եղ աղ-քաթի սուռաթը»:

Յերբ Խոսքով աղայի սահնակը վերջին անդամ մտնում ե բակը, Սեթն խկույն վրա յե հասնում, վոր ձիերն արձակելու և ախոռ քաշելու դործում ող-նի հորը:

Վարդանը, վոր իրենց սահնակի զանդակների ձայնը լսելով, նորից անկվել եր պատշգամբում, Սե-թին նկատելուն պես, ոճիքն ու փողկապը հանդիսա-վոր ձեռք տնտղում ե և կովկելու պատրաստովող աքլո-րի գիրք ընդունելով, զիւ ձայնում.

— Սեթ...

Սեթը վերե և նայում.

— Տե՛ս, — ձայնին տիրական տոն և տարիս Վարդանը և, առանց այլ բառ արտասանելու, սկսում

ինչ-վոր ծամել՝ գլուխը միշտ նույն աքլորային գեր-
քում:

Սեթը մի պահ սպասում ե, վոր Վարդանն ասե-
իքը շարունակի, բայց յերբ նկատում ե, վոր
«տե՛ս»-ով ամեն ինչ վերջացավ արդեն, մատներին
փչելով շուռ և գալիս և շարունակում գործը: Նա ար-
ձակում ե ձիերից մեկը, իր հերթին, քաշում ախոռը,
ողնում հորը, վոր սահնակը քչի կառատուն, վորից
հետո վազելով տուն և մանում:

ԿԱՆԱԶ ԱԶՔԵՐԻ ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Ցրտի ասեղներն ամելի և ավելի ծակծկել են
սկսում: Սև գիշերը կամաց-կամաց ծանրանում և
ձյան սպիտակ կրծքին:

Սեթը, վորպես «տոնական չոր», հագել և հոր
րայն ու յերկար թեանի բաճկոնը: Նա ձյունոտ կոռ
չիկները խսիրի մրա ինսամքով մաքրելուց հետո Խոս-
րով, աղայի դորգապատ սահնելումերից ակնածու-
թյամբ մերեւ և բարձրանում:

Դահլիճի մի ծայրից -մյուսը հսկայական ճաշա-
սեղանն ե, սպիտակ սփոսով ծածկված՝ վրան մի
ամբողջ բանակ կշտացնելու չափ զանազան ուտելեղենն
սկսած Փրանսիական «սալրին»-ից, վերջացրած Բաղ-
դի ձկնկիթով: Սեղանի մի քանի կետերում դարսել են
ֆերմոցային գույնզգույն ծաղիկներ:

Կանայք սեղապորմել են սեղանի մի ծայրին, իսկ
աղամարդիկ՝ մյուսին: Տղամարդկանց, այսպես ա-
սած, գուտում սեղանի ճակատին բազմել ե ինքը՝ Խոս-
րով աղան՝ ներկած «իհալա» բեխերով և աչքերի տակ
յերկծալ կախալած քսակներով: Իսկ կանանց գոտում
նույն «պատվալոր» տեղոր նվաճել ե տանտիկին Թաւ-
ուռէի խանումը: Նա դեղին, նոսր մաղերը ձգել ե
թռչնածե գլխին և յետեկից «ա լա Փրանդա» փնջելով,
վրան սպիտակ մեծ մի սանր ամբացրել: Թագուհի
խանումի կանաչ աչքերը վառախում են բալմականու-
թյունից: Նբանցում կեղծ մի ժաման և անմեղոջ ցո-
լում:

Զահել Հյուրերից մի քանիսը դիմու լիքը փարչե-

բը ձեռներին՝ մեծ վողերությամբ մեկից-մյուսին
թռչելով, գինի յե, վոր լեցնում են զատարկվող բա-
ժակները:

Կիսակրոպականացածները պատառաքաղն ու դա-
նակն իրար խառնած՝ կրում են, հա՛ կրում... իսկ
մնացածները, վոր մեծամասնություն են կազմում,
այդ «ղամաղալ»-ից հրաժարվելով, ձեռներն են գոր-
ծի դրել և խժում են՝ քթով-բերնով յուղի մեջ կո-
րած:

Դահլիճի մի ծայրում տեղափորիկ են նվազա-
ծուները, վորոնք «շաբաշ»-ով վողերված՝ նվազում
են անվերջ ու անդադար, վորպեսդի աղաները, խա-
թուններն ու խանումներն ավելի մեծ ախորժակով գա-
նուշ անենք...

Նվազածուների առանցքն է կազմում «քանոն չա-
լող» Արմենակը, վոր կիսափակ աչքերն առաստաղին
հառած՝ թյուրքական սրտարուղի յեղանակներ և նո-
վագում, հետն եր յերգո՞ւմ, յերգո՞ւմ... Սմեն ան-
գամ, յերը հասնում ե ծայնը պահելու տեղին, նա
հետ ու առաջ ե շարժում ուսերը, մի վայրկան դլու-
խը կուցնում և ապա՝ լծի տակ յեղած յեղան լար-
վածությամբ դարձյալ դեպի վեր ձգում:

Սչչի Մկոն, սպիտակ գողոնցը հագին՝ անձամբ և
ժառուցում կերակրով ծանրաբեռն մակույլաձև ափ-
սեները: Յերը կաքափակ փլակը հրամցնելուց հետո
պատրաստվում եր դուրս գնալ դահլիճից,

— Կայնի, բան ասեմ, — խոխոաց Ավետիս աղան,
վորին, իր արտասովոր չաղության համար, «չաղցի
քար» մականունն եյին կացրել:

Զաղցի քարը բաճկոնակի գրպանից մի վոսկի հա-
նեց, յեղվով թրից և Սչչի Մկոյին մոտը կանչելով,
կպցրեց նրա յայն ու բարձր ճակատին:

— Են մնաս, աղա, մեկ վոսկիդ խաղար դառ-
նա, — չնորհակալություն հայտնեց Սչչի Մկոն և

արախությունից շառադունած՝ վլուխը յետ պահերով
դուրս յեկավ դռնից:

Թագուհի խանումի սպասուհիներն իրենց նոր չթե
շնորհը հաղած՝ ձեռները սրտաներին կանգնել են դահ-
լիճի դռանը և անխոս սպասում, թե ով ինչ կհրամա-
յի, վոր խկույն կատարեն:

Սեթը գաղտագողի մոտենում ե և սպասուհինե-
րի արանքից սրտատրոփ ու բերանաբաց դիտում ներ-
սի անցուլգարձը, վորը կատարյալ հեքիաթ և թվում
նրան:

Քիչ հետու Զաղցի քարը, վոր խնջույքի սկզբին
թամադա յեր ընտրվել, վոտքի յե յելնում... բոլոր
ձեռներն ու բերանները աստիճանաբար դադարում են
զորձելուց: Լուս են և նիվազածուները:

— Եսա չեն սեղնի տեր եսոր մեր պատվական
մոսրով աղեն չի, այլ անոր պատիկ թագաժառանդ,
Վարդանն ի եսա չեն սեղնի տեր...

Յեվ Զաղցի քարն իր խաշած ճակնդեղի հետ մըր-
ցող յեցեսը դեպի Վարդանը չուռ տալով, շարու-
նակում ե.

— Բայամ, դու, վոր այսքան պատվալոր մարդ
ես ժողվեր հորդ տուն, ըսել ե, դու այն Վարդանն
ես դառնալու, վոր իր աղդի ու կրոնի աղատության
սիրույն հողի տվեց Ավարայրի դաշտի մեջ...

Հանկարծ պայման ե բուռն ու յերկարառու ծա-
փահարություն, վորից հետո Զաղցի քարն ընդհա-
նուր սեղանակիցներին դատնալով, բարբառում և
հանդիսավոր մի տոնով.

— Իմենք գալոց Մեծն Վարդանի կենաց, կեց-
ցեր...

— Կեցցեր, կեցցեր, — արձադանքում և սեղա-
նը մի ծայրից-մյուսը...

Գինու բաժակները դատարկվում են մինչև վեր-
ին կաթիլը:

Վոտքի յե ցատկում Վարդաննեց դպրոցի յերի-

տասարդ տնօսուչ՝ պ. Տրդատը. Նա ակնոցներն ուղղում ե արծվային քթին և գոչում։

— Դուք իմ սրտեն կխոսիք, Ավետիս ազա, ինձ այլ բան չի մնար ըսելու, յեթե վոչ... Նա ձեռքով ինչ-վոր նշան է անում, հետն ել տոն տալիս...

Դրա վրա նվազածուներն իսկույն «Մեր Հայրենիք» են թնդացնում, վորին ձայնակցում են դրեթե բոլոր տղամարդիկ: Վոտքի յե կանդնել ամբողջ սեղանը: Բոլորի զեմքին նկատվում ե ինչ-վոր Հանդիսավորություն:

Եերբ լուսմ ե յերդը, և մարդիկ դարձյալ անցնում են ընդհատված կերուխումին, Վարդանը հրնդկահավի նման փքիլած, սկսում ե Հյուրերից պաշտոնապես մեկ-մեկ ընդունել արծաթե ու վոսկե զանազան նվերներ՝ ել ժամացո՞ւյց, դրի՞չ, մատի՞տ, թանգարակա՞ն, փոքրիկ դաշո՞ւյն, Ելի ժամացույց և այլն: Մեկը, նույնիսկ, բերել ե արծաթակալմ փոքրանակը «Ավետարան»...

Սեթն աչքերը լարած՝ պիշ-պիշ Վարդանին ե նայում ե և հեղեղի պես նրա առջև թափվող նվերներին... Սեթի մարմնով մի ցուրտ սարսուռ ե անցն նում. Նրա ձեռները մեքենայորեն չոշափել են սկսում բաճկոնի գատարկ գրաբանների անկյունները: Սեթը նայում ե իր արտաքինին և ստրող եյությամբ զգում իրենց փողորմելիությունը. «Ես ի՞նչ աշխար ի... Մենք ել ենք մարդ, իսո՞նք ել... — անցնում ե նրա մտքով։

Մի նուրբ ու բարձրահասակ աղջիկ գուրս և գառիս կենտպարի:

Նվազածուներն իսկույն փոխում են յեղանակը և հարմարեցնում պարողի ութմին: Բոլորի ուշադրությունը սեմեռում ե պարողին, վորը թերեք մեղմ որորելով, ամօթխած Հայացքը հատակին հառած՝ կաքավում ե զորդի վրա: Նրա կապույտ մետաքսե չորերը գազային լամպի ուժեղ լույսի տակ

յերբեմն չողում են կանաչավառ, յերբեմն նուրբ յեղանգներ ընդունում:

Սեթը պարի յեղանակը լսելուն պես, թեև զգացացել եր արդեն, բայց զժվարանում եր տեսնել պարողին: Այնպես յեղալ, վոր մի անդամ շրջան գործելիս, պարողն անցավ դուան մոտով: Սեթը տեսավ նրա շրջապեստի շլացուցիչ վայլը, լսեց մետաքսի նուրբ իշխոցն ու ինքնամուսացությամբ տարված՝ կամացուկ ներս սողաց և սպասուհիներից ել առաջ անցնելով, դրեթե մոտեցավ սեղանին:

Թագուհի խանումը հենց վոր նկատեց Սեթին, ոչից խայթվածի նման, աթոռից պոկվեց ու խելագարի պես խոյացավ գեպի նա.

— Իչու քուռակ, եղ վլուտե՞ղ ես հասե... Կուպես նամուսս խողի՞ն հավասար անես, իսա՞... Զահնա՞մ ելի, քանի աղեն չի տիսե, թե չե՞...

Նրա կանաչ աչքերից այնպիսի կատաղություն եր ցայտում, վոր Սեթը մի լուսե գլուխր կորցրեց և մինչեւ ականջի ծայրերը շիկնեց: Ավա ինքն-իրեն հավաքելով շուռ յեկավ հանկարծ, կայծակի արագույամբ փաղեց զեպի գուռը, ճեղքեց սպասուհիների արանքը, դուրս թռավ զահլիմեց և, առանց յետ նայելու, զըգեհից ազատվածի նման փախավ այդ զեղի ու զիել ապարանքից ու իրեն զցեց իրենց ցուրտ իրձիթը:

Սեթը նյարդային շալժումով վերցրեց սենյակի անկյուններից մեկում ուղղուածեւ կանգնեցրած թաղիքը, բաց արեց, պատի պահարանից հանեց իր վերմակն ուրածը, զցեց թաղիքին ու չորերն արագ-արագ հանելով մտավ անկողին ու խողիածի նման կծկվեց՝ յերեսը զեպի պատը չուռ տալով:

Շուտով Սեթի միտքը պաշարում են ծանր ու այրող խոհեր, թե աշխարհի բաներն ինչո՞ւ յեն այսպես, ինչո՞ւ ինքը ցուրտ սենյակում թաղիքի վրա ընկած՝ սոթի սրթսրթա պիտի, իսկ մյուսը տաք սենյակում լողա փոսկու և հաճույքի մեջ... Եեվ գեռ անպատճու

թյուն համարի աղքատի ներկայությունն իր սենյակում...

— Ա՛խ, ա՛խ,—խորը հառաջում և Սեթը և չթե զերմակի յեղերքով սրբում թաց աչքերը:

Նվազածուների արևելյան յեղանակների ձիգ ու լալիկան յելեջները կամաց-կամաց որորում-թմրեցնում են Սեթի ուղեղը: Սեթը վերհիշում է Թագուհի իսանումի կանաչ աչքերը, նրանց խայթող փայլը... առաջ լսում շան հեռավվոր կաղկանձ, վորից հետո աժեն ինչ գորշանում է, մշուշվում ու ծածկվում գաղտուությամբ...

ՃՐԱԳԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Գարում: Մայիսը, վորպես ուրախության անզուսող մի ճիչ, պայթել ու սփովել և սարերին, դաշտերին, այդիներին ու բակերին: Ծառերի, խոտերի զմբուխութ արծաթափայլ բեկրեկվում ե զեփյուռի շոյանքից, և ծաղիկների արբուցիչ բույլը գիշեր-ցերեկ լողում և Այդեստանի փարթամ գրկում: Ճախրում են բաղմեացիկ թուչունները, խենթորեն ճախրում յերկնքի լարաց Փոնին և արեկ լեռնային ճառագայթների հետ իշղութ Փոնին ու դայլայլը ցնցուղում յերկրի մանկածը պիտ յերեսին:

Սեթի ծնողները բակում կարմրավառ վարդենիների գիմացի քարերին նստած՝ իրիկնասրահն են կըծկում և անհունորեն հրճվում երենց միակ վորդու: Սեթի անվան հետ մանկան բավականությամբ զբաղվելով:

Սեթն արդեն պատահի յե դարձել, թիկնեղ ու ոռոյդ մի պատահի: Երա ձվածի թուխ դեմքին վառվում են սաթի պես սև աչքերը:

— Շատը զնաց, քիչը մնաց. լաճդ, հա՞ , հա՞ , հասավ, ել ինչ կուվես... Մի տարուց, կասի, վկայակիտի տան,-անզուսպ մի ժպիտ մանր աչքերում, կան պիտի տան, մանզուսպ մի ժպիտ մանր անզուսպ և գիտեցածը բարձր տրամադրությամբ մի անզուսպ և հիշում և Սեթի մայրը՝ Ալմաստը:

Կնոջ այդ հուսաչող խոսքերը, ինչպես միշտ, այս անզուսպ ել հուզում են Արաբաջի Ակոյին. նրա մասուներն սկսում են ավելի մեծ թափով խաղալ թաղրեհի փայտե հատիկների հետ, իսկ ժպտացող այտերին խօսանում են վաղեմի, մաշված փոսիկները:

— Բա, վոր նոքան կչարչարվենք, կզրկենք մեզ,
վի՞ր համար ի... Կասեն՝ վարժատան եղ հազար տպե
մեջ մեր Սեթը հմենից առաջ ի ընցի:

— Մեռնեմ. աստծու գորության, վոր աչքն աղքատի
վերեն կպահի, մեռները գեղի յերկինք յերկարեցվ,
իր աստծուն սրտանց գոհունակություն և հայտնում
Ամաստը:

Եերկու անգամ խփում են վորդոցի դռան ճկիկը.
Ամաստը վեր և կենում ու թմրած վորները կաղ-
կաղ վորիելով, շարժվում գեղի գուռը:

Քիչ հետո փայտե աւանցքի վրա հենված դռանը
ճառալով բացվում է, և Սեթը պայծառ մի ժպիտ յե-
րեսին, ներս և ընկնում բակը:

— Գտա՛, վերջապես, դտաւաշուժ բացականչում
ենա թեկի տակի ծագալուն գիրքը ցույց տալով:

Մայրը թեև չեր կարող հասկանալ զրքի պատճա-
ռած ուրախությունը, բայց, իր հերթին, անչափ հրձ-
գում ե՝ տեսնելով վորդու բարձր տրամադրությունը:

— Գտ մարդ, բա չե՞ս ասե՛ լաճդ ուզած գիրք
ձարեր ի...

Սեթի աչքն այս անգամ ել ակամա ընկնում և
բակի պատին ամբողջ մեջքով հենված թթենուն, վորի
տերեներն որեցոր աճում են, խտանում: Սեթը հի-
շում և իր մանկությունը չորս տարի առաջ, Ոսմանին
և հշում, իրենց քաղցր զույցները թթենու բարձր
ճյուղերին, գետը, զրոսանքները... Յեվ մի տեսակ
մեղմ, դուրեկան սարսուռ և անցնում նրա մարմնով:

— Ասես՝ Շյուքրոնք նամակ չե՞ն առնե Ոսմանից,
Հորը դառնալով հարցնում և Սեթը, — տիսնաս՝ ի՞նչ
կանի...

— Հոր հետ եսա քանի տարի յե խռով ի. նամակներ
մոր վրեն կզրի: Շյուքրին կասի՝ Ոսմանը զարիթու-
թին կորիվի:

— Զարիթութե՞ն, — դարձանում և Սեթը, և մի բարե

հայրացքը ներսը զցելով, Ոսմանին պատկերացնում և
վորպես սպա՝ նուրբ բեխերը վորորած, արծաթաշայու-
տապեկներով մի յերիտասարդ, նման իր տեսած բազ-
մաթիվ սպաներին, վորոնք փողոցից անցնելիս այն-
պես են պահում իրենց, վոր ասես բարդիներն անդամ
պարտավոր են բարեկ կանգնել... «Ձե, չի հարմա-
քեր, — մտածում և Սեթը և մտնում տուն:

Սեթն արագ—արագ ուտում և իր բաժին թանա-
պուը և նստում վորքիկ հնամաշ սեղանի առջև աշխա-
տելու: Ոսմանի մտերմությունից զրկելուց հետո,
նա իր մենության ու ձանձրութիւնի ժամերը վաղուց
սկսել և լեցնել ընթերցանությամբ, վորը կամաց վա-
ճաց զարձել և նրա պատաններության տարերքը: Դրա-
բոցում հենց այդ որն եյին անցել Փրանսիական թեծ
Հեղափոխությունը, և Սեթը, ուսուցչի ցուցումով,
նույն որն ենթ ձեռք և բերել «Մի գյուղացու պատմու-
թյուն»-ը: Ահա նա չուռ և տալիս գրքի կազմը, տես-
նում հեղինակներ՝ Երկմանի և Շատրիանի զիմանկար
ները, մի քանի բովե խորն ակնածությամբ նայում
նրանց աչքերին և ապա անցնում ընթերցանության:

Սահում են ժամերն իբրար յետեից, բայց Սեթը
միայն այն ժամանակ և գլուխը բարձրացնում, յերբ
մթան պատճառով ել չի կարողանում ջոկել տառերը:
Նա վառում և ձեթի ճրագը, զնում սեղանին և իսկույն
շարունակում ընթերցումն այսպիսի կրքով, ինչպիսին
ցույց և տալիս մանուկը քաղցրեղեն ճաշակելիս: Սեթն
աղոտ լույսի տակ ազահորեն կրանում և այն եջերը,
ուր հեղինակները վիպական վրձինով նկարել են Առ-
քենների, Միշելների դիմակավոր դեմքերը, վորոնք
նրան պատկերանում են վորպես ժանիքները սրած գայ-
երը, գայլերը, վոր պատրաստ են ամեն բովե հոչոտե-
լու աշխատավոր գյուղացու՝ առանց այն ել տուրքե-
րից հյուծված մարմինը:

Մայրը մի քանի անգամ իմաց և տալիս վորդաշ,
վոր ճրագը մարի ու քնի, վորովհետեւ ուշ և խիստ,

բայց Սեթը միշտ ել դվնով հասկացնում է, թե չի
ցանկանում:

Կարդում ե Սեթը, կարդում աղահարար... Յեվ
նրա աչքին՝ վոսկենկար գորգերի փոնին յերեսում են
Խոսրով աղան, Թաղուհի խանումը և բոլոր ծանոթ
խանումներն ու՝ աղաները: «Կնշանակե՝ մարդկանց
մեծ մասը կապրի մյուսի հաշվին, ինչպես սարդը՝
ճանճերու», —մի բոյե գլուխը գրքից բարձրացնելով
խորհրդածում ե Սեթը և աչքերը կիրացած՝ ձեթի օր-
րադի փոքրիկ ու թրթռուն լույսին նայում...

Արդուները մեկը մյուսի յետելից կանչել Ան ըս-
կում, դրա վրա անկողնում անհանդիսա շարժվում
է Ավմաստը:

— Տղա, Սեթ, հերե՞ք չե կարդաս, —անկողնում
նստելով և աչքերը ճմրտելով, վորդուն գթառաւառ նկա-
տողություն ե անում նա, կես գիշերն ընցավ՝ չըրմո՞ր
աքրորդ խոսեց: Վե՞ր կաց, մատաղ, վե՞ր կաց քնի,
վաղ վարժատուն պիտի երթաս, ե՛, մեղք չե՞ս, ընչե՞
կչարչովես...

Սեթն այս անդամ լսում է մորը, մանավանդ վոր
իրեն հաշիվ տալու մեծ կարիք և զգում. իսկ նման
գեղքում՝ պառկած դիրքն ու աչքավակի դրությունն
անփոխարինելի յե նրա համար:

ԲԱՐՁՐԱՑՈՂ ԱԼԻՔՆԵՐ

Մի անդամ, ճաշից հետո, Սեթը բակի դռան քա-
րին նստած՝ ամրող ուշադրությամբ խրվել եր Աղա-
նեղըու բանաստեղծությունների թարգմանական պը-
րակներից մեկի մեջ և մեծ աշխուժով անդիր եր ա-
նում «Վողջունո՞ւմ եմ ձեզ»:

Մեկ ել՝ մայրը հելաշունչ ներս ընկալ բակը,
թե՝

— Տղա, Սեթ, ախըր բլեթ ես առե, թատրոն պիտի
երթաս, ե՛... Դե՛, վեր կաց, վշուր մը բան դիր բե-
րանդ, վոր ենտեղ չանութնաս. կուղես՝ ձեթե բա-
զարջ եմ թիսե, կտոր մը դիր ջերդ ու գնա, վոր յետ
չմնասո:

Մեծ եր Սեթի խանդալառությունը-դրքից հետո՝
թատրոնն. «Զա՛ն»—թռչում ե նրա բերանից և այն-
պէս լավ և զնում, վոր ասես պատանեկության ամ-
բողջ հմայքը շողալիս լիներ արդ միավանկ բառի մեջ,

Նա ընտրում է մոր վերջին առաջարկը. մի կառը
«ձեթե բաղարջ» և զնում զբանը և դուրս թռչում
ոնից:

Սեթը փողոցում շուտ-շուտ կրկնում է մտքում.
«Վողջունո՞ւմ եմ ձեզ, ով ժիր գութանի չարքառչ
հերոսներ».

Վոր թե վորոտի, թե տապ արեի ճամանչերի
տակ.

Ուժով իւլում եք աղահ, կոշտ հողից ձեր հացն ու
փառակ...»:

Սեթը մի քանի ըոսկեից արդեն դպրոցի դահլի-

Ճռւմն ե , ուր և տեղի յեն ունենալու թիֆլիսից յեկած
ժատերախմբի ներկայացումները :

Ընդպարձակ դաշլիճը գնալով լեցվում է , հա լեց-
լում Այդեստանի կուլտուրածարավ յերկու հասարա-
կությամբ ; Յեկել են և Քաղաքամիջից՝ կորելով ա-
վելի քան 4 կիլոմետր տարածություն :

«Հասած» աղջիկները մեծ մասամբ նստել են ի-
րենց մոր , կամ տատի կողքին և վարագույրի բացվե-
լուն են սպասում , վորպեսզի ցած իջնան գլխների
խայտարգետ «վելո»-ները :

Իսկ «փեսացու» յերիտասարդները կաթի հոտ ա-
ռաջ կատուների նման հածում են զահլիճի պատերի
տակ և զաղտագողի աշխատում վորսալ այս կամ այն
«Հասած»-ի հայցքը :

Այդ որվա ներկայացման մասին աֆիշներ կան
փակցված զահլիճի պատերին , գունագոր , ծավալուն
սմբշներ , վորոնց վրա , զեռ հեռվից , տեղացիների
տարր միանդամայն արտասովոր մեծության տառե-
րով յերելում ե «Պեղո» անունը :

Սեթը կանդ և առնում աֆիշներից մեկի առջև և
փորձում վերհիշել «Պեղո»-ի բովանդակությունը . նա
հիշում ե անցյալ ուսումնական տարին , զբականու-
թյան ուսուցչին , «Հայ զրոյներ»-ը . . . Սակայն չի կա-
րողանում բավարարել իրեն : Սեթն իսկույն գտնում ե
դրա պատճառը . «Զե՞ վոր մենք միայն հատվածներ
անցանք , այն ել՝ թիֆլիսի բարբառով գրված , վորով
շատ բան դրեթե անհասկանալի մնաց , վորովհետե-
նիքը՝ ուսուցիչն ալ վաստ կհասկնար այդ բարբառը» :

Այդ հանդամանքն ավելի յե լարում Սեթի հետա-
րքությունը , նրա մեջ բուռն ցանկություն ե առա-
ջանում՝ բովե առաջ տեսնել այդ պիեսի տիպերը և
պարզել իր հիշողության պատերին նստած մշուշոտ ու
աղոտ պատկերները : Սեթն այսքանն ե միայն լավ հի-
շում , վոր Պեղոյի փողերն ինչ-վոր վաճառական

ուստեղ և ուղում , և այդ խնդրի չուրջն առաջանում է
մեծ պայքար ու իրարանցում :

Սեթը չիմացավ , թե ինչպես հնչեց և յերլորդ
զանդր , վորից հետո բեներն ածիլած , կոչուցած յե-
րեսով մի յերիտասարդ իրեն մոտեցավ և բամբ ձայ-
նով հայտնեց .

— Պառն , գուալվացեք , խնդում , ձեռ տեղը :

Սեթին խիստ տարութիւնակ թվաց այդ յերիտասար
դի «ո»-ային արտասանությունը : Սեթը , վոր ներս
մանելուն պես իր տեղը վորոշել եր արդեն , լսեց «պա-
ռն»-ին և անցավ վերջին կաբդերը :

Քիչ հետո բեմի շագանակագույրը վարագույրը
մեջտեղից կիսվում և և կծկվելով զնում-հավաքվում
նրա առաջամասի աջ ու ձախ անկյունները :

Սեթը տեսնում է Գեղոյին , թարմ ձուկը թաշկի-
նակով տուն բերելիս . . . Դիտում ե նրա խրճիթի չորս
բոլորը և հուզումից՝ մի ձեռքով պինդ բռնում մյու-
սը , վորպեսզի կարողանա զապել իրեն . . . ի՞նչ նմանու-
թյուն այդ պատկերի և իրենց տան միջն . իր հայրն
եւ , հաճախ , Խորով աղային զարնան առավոտները
կառքով չուկա՝ Քաղաքամեջ տանելիս , վերագարձին
թարմ ձուկ ե դուռմ , յեցնում թաշկինակը և տուն բե-
րելով , մեծ բավականությամբ առում :

— Արմաստ , ի՞նչ կողելու ձուկ ի , տես ս—մարդու
հոգու մեջ կյեռատ . . . տաս հատին տաս փարա յիմ
ավե , ե՞ . . .

Առաջին ընդմիջման ժամանակ Սեթը , իր հեր-
թին , հետաքրքրության համար ման ե գալիս զահլիթի
անկյուններում զանովող դասարանները , վորոնը զա-
սարկվել են և ծառայում են՝ մեկը վորպես հանչեր-
ձարան , յերկրորդը՝ վորպես ծխարան , յերրորդը՝
վորպես բուֆետ , իսկ չորրորդը , վոր Փիգիկա-քի-
չիսկան կարինեան ե , փակ ե մնում :

Սեթը բուֆետում հանդիպում ե Խորով աղայի
աղայի վարդանին , վորը թարուն և յեկել իր մորյեղ-

բոր աղջկա՝ Վրեժուհու հետ։ Սեթը ծանոթ է նրան դեռ անցած տարվանից, յերբ իրենց և նրանց դպրոց ների բարձր խմբերի աշակերտությունը միացյալ ուժե բով հանդես կազմակերպեց նույն այդ գահինում։

— Ինչ դժվար հասկանալի լեզու յե յեղեր այդ թիֆլիսցիներու բարբառը, — նկատում և վարդանը։

— Յես ալ քիչ բան հասկցա, — նրա կարծիքը հաստատում է Վրեժուհին և թեթև շիկնում։

— Դուք ալ փորձեցեք բառերեն ավելի գործողություններուն հետիւ և կտեսնեք, վոր գրեթե հասկրնալի կդառնա փիեսը, — արտահայտվում է Սեթը և անհամարձակ ու մեղմաժպիտ նայում Վրեժուհու աչքերին։

Սեթը հիշում է անցած տարվա հանդեսը և իրենց՝ լուսությամբ փոխանակած թաղումն ու սիրազեղ ժպիտները։ Նա Վրեժուհու ժպիտում զգում եր անհուն մի խորություն, և ասես լսում քաղցր մի հեքիաթ։ «Խսկապես վոր՝ ի՞նչ եր ատիկա» — ինքն-իրեն հարց և տալիս Սեթը։

Վրեժուհին կարծես կարդում է Սեթի ներաշխարհը. Հը. Նա զրանից՝ ավելի յե շիկնում և հայացքը մեղմուեն զցում բուռն զարգացած կրծքին, վորեն Սեթը նայում է վորպես խորհրդավոր, անառիկ բերդի։

Զանդի ձայն։

— Տեսնենք՝ ինչ պիտի ըլլա շարունակությունը, — այլ խոսք չզտնելով ասում է Սեթն ու գնում զրագելու իր տեղը, իսկ վարդանն ու Վրեժուհին անցնում են զետի առաջին կարգերը։

Սեթի նյարդերի միջով ասես ելեկտրական հոսանք և յօղում։ Նա չի կարողանում նստած մնալ և դիտում է գրեթե միշտ կանգնած։ Սեթի կեցվածքի մեջ կա ինքնամուռացության հասնող մի լարվածություն, վորը պարզ ցուց և տալիս, թե նա ինչպես ապրում է պիեսի քովանդակությամբ։ Սեթը Զիմզիմովին է ուսումնասիրում — այդ սմբած վաշխառույթին, վորը վոսկու ուժով

տնօրում է կտրել Պեպոյի յերկար լեզումն... Իսկ Պեպոնի իր իրավունքն է պահանջում՝ յետելի վոտների վրա բարձրացած ցուլի մոլեզնությամբ։

«Ա՛խ» — թուչում է Սեթի սեղմած ատամների արանքից, և նրան մի բոսե թվում է, թե Խոսրով աղաք և բեմի վրա. ճիշտ նույն գոռող ու թունոտ վերաբերմունքը՝ զեպի իր ճամփն ընկածները, նույն ժանիքը դայլի...»

Շուտով հրապարակ է գալիս Զիմզիմովի կոտըռտ վող կինը՝ Եփեմիան. նա սկսում է ազդեսային խուամանկությամբ ավելի սղնացնել ամուսնու լարած թակարդը։

«Իրար լբացնող ի՞նչ հրաշալի դույլ. ի՞նչ անդուգական դարձանք» — անցնում է Սեթի մտքով։ Հանկարծ Սեթն զգում է, վոր մեկն առաջին շարքներից պիշտից իրեն և նայում... Նրա և Վրեժուհու հայացքներն իրար են հանդիպում... Ի՞նչ ջերմություն ու թովչանք կա Վրեժուհու զեմքին, վոր թեթև շառագումած՝ փայլում և բեմից ընկնող զաղացին լսմողի ուժեղ յույսի տակ։

Սեթը նայում է, նայում և ժապում թեթև։ Դրա վրա, Վրեժուհին իսկույն չուռ և տալիս դլուխը, վոր ըլինի թե նկատող լինի...»

Դրանից հետո Սեթը մի քանի բոսե չուտ-չուտ սառուցում է, թե Վրեժուհին դարձյալ իրեն չի՞նայում, արդյոք... Բայց յերբ սկսվում է Զիմզիմովի մենախոսությունը, Սեթն այնպես և հավշտակվում դերակատարի զիմախաղով և արտասանությամբ, վոր մոռանում է Վրեժուհուն, նրա զեբող հայացքը։

Սեթը յերկրորդ ընդմիջմանը գուրս չը գալիս դահլիճից և մնում է նստած, վորպեսզի հանգստանա և կատարի լսածների ու տեսածների ամմիովումը, այլապես զգում է, վոր չողիսի կարողանա զեկավարել իր լեռնացող հույզերը։

«...Ի՞նչ սքանչելի գրող է յեղեր Սունդուկյանը,

Ի՞նչ հասու գրիչ ունի... Հասզա դերասաններուն
խաղը. մեր սիրովներն ուր, ասո՞նք ուր...»—խոր-
հրդածում ե Սեթը:

Դահլիճում հանկարծ բացարձակ լոռություն ե տի-
րում:

Գործողություն յերբորդ:

Զիմդիմովը բորենու քայլերով մանում ե Պետոյի
խրճիթը. նա «բարաթ»-ի հոտ և առել...

Սեթի ձեռները դնարով խոնավանում են, սառ-
չում: Հետաքրքրության կրակն ավելի ու ալելի յե-
րոշավառվում նրա սև ու պայծառ աչքերում:

«Ո՛, զգելի հրեշ»—չշնջում են Սեթի հուզումից
զողողացող շրթները: Նա կարծես ձուլվել է Պետոյին և,
իր հերթին, զրեթե բարձրաձայն կրկնում ե. «Արանո՛վ
պիտի կտրեմ նրա դյուխը»:

Վարագույրի առանձին կեսերն անսպասելիորեն
դուրս են պրծնում իրենց անկյուններից և արագու-
թյամբ զայխ իրար միանում:

Սեթը, աակայն, դժգոհ է: Բողոքում ե Սեթը. նա
կենարունախույզ դիրք ընդունած՝ ուզում ե նետվել
բեմ, պատռել վարագույրը՝ տեմնելու, ի՞նչ պիտի
ամի՞ Պետոն բանուից դուրս զալուց հետո... Զե՞ վոր
Զիմդիմովը չխայտառակիւց գեռես, նրա լրբությունը
չհրապարակեց քաղաքում:

Սեթը հանկարծ ցնցվում ե. «Ան ո՞վ ե, վոր կըա-
չե թես»... Եռու և զայխու—վարդանն ե, կողքին ել՝
Վրեժուհին, վորը ժապում ե մեղմ:

— Խելքդ ո՞ւր ե, կկանչեմ, կկանչեմ, իսկ քուն
չես լսեր: Տուն յերթալու միտք չունի՞ս, ի՞նչ ե:

— Իրե՞նք տե, իրենց գրաբառ կոտրտելը տես—ջա
սես Ստամբուլա յեն իկե, —նրանց խեթ-խեթ նայելով,
հեղնում ե, ըստ յերեգույթին, արհեստավորի մի ա-
շակերտ և ընկերոջը միանալով, դուրս զայխ դահլի-
ճից:

Այլդեմ և. լեզվի կուլտուրականացումը մեծ դժգո-
վարությամբ ու ծանրությամբ և առաջ զնում այդ տա-
փակ կառւիներով արեւելան քաղաքում: Սակայն դըպ-
րոցական նոր սեբունդը պայքարում է համառ:

Սեթը ծածկում է Փեսը և հետեւում նրանց:

Լուս է Սեթը, լուս ու մտախոհ. տեսածի անդրու-
դարձումներն ալեկոծում են նրա մտքի անափի զաշտե-
րը, յեռում, փրփրում...

Նրանք դպրոցի դրան ճակատին կախված լապտե-
րից արձակվող թույլ լույսի առաջնորդությամբ մըս-
նում են կողքի պազուան: Այսաեղ յուրաքանչյանը
հաբյուր քայլի վրա փոքրիկ սյունի զվիթին հատուառ-
ված նավթի լավագեր կա, վորի աղոս լույսը անցորդ-
ներին հնարավորություն և տալիս միայն իրենց վոտ-
քերի տեղը վորոշելու:

— Սեթ, հուզված կերելիս,—լոռությունը վերջա-
պես խցում է Վրեժուհին:

— Իսկ զուր՝ վո՞չ:

— Յես, ճիշտն լսում, վիհսի բովանդակութենեն
դոչ չմնացի, թեհ պիտք և խստովանիմ, վոր հրա-
չալի կիսաղան թիֆլիսի գերասանները: Մենք այդպի-
սի թատերախումբ դեռ չեյինք տեսեր, —արտահայտ-
վում և Վրեժուհին և զվիթ մետաքսե վարդագույն
քովը շակելով, կիսախավարի մեջ Սեթին նայում
հարցական:

Սեթի մարմնով ինչ—վոր անախորժ սարսում ե
անցնում: Նա առնչացնի տիբում ե, վոր Վրեժուհին այդ
պես լրջորեն համակարծիք չե իրեն...

— Յես կկարծեմ, վոր այդ Զիմդիմով կոչեցրալ
թիֆլը բացառիկ վատ անձնավորություն մըն և և, ինչ
պես մեր գրականության դաստանն կրսե, նման թի-
ֆեր պարունակող աշխատությունները գրական արժեք
չեն ներկայացներ, —իր ասածը հաստատելու համար,
շարունակում է Վրեժուհին:

— Ինչե՞ր կըսես, Վրեժուհի, —բացականչում ե

Սեթը, վոր մեծ անհամբերությամբ նրա խոսքի վերջառալուն եր սպասում և, առանց Վարդանի ներկայությունը հաշվի առնելու, քանդում է իր մտքի առջև ցցված պատճեցը, —ձեր զրականության ուսուցչը ըստ սածը ճիշտ է, բայց «Պետո»—ի թիվերում բնագ չի վերաբերիր: Զիմղմովին տեսնելուն պես, յես մեր այս սրարունին հայր՝ Խոսրով ազան պատկերացուցի, այնքան վոր յերկորյակային նմանություն գտա ոչոց յերկուքի մեջ... Որ չի անցնիր, վոր Պետո մը դուքո չվոնդե իր բակեն... Յեվ ինչքա՞ն Խոսրով աղաներ կան, վորոնց մենք չենք ճանչնար:

— Կատես, սրբկա, — Հանկարծ բռնկվում է Վայր գանն արդ անսպասելի վիրափուրանքից և քիչ հետու քաշվում:

Սեթը մեծ բավականություն է զգում, վոր Խոսրով աղայի տղան այլպես խայթվեց, և պեպոյական համարձակությամբ վրա յետ տալիս.

— Ինչո՞ւ կծածկես ճշմարտությունը. յերեկ յերեկոյան չե՞ր, վոր Շեկոյենց Հայրոն, այդ խեղձ մշակը լալով գուրս յեկավ ձեր դռնեն: Հայրդի՞նչ կըսե, վոր չի տար այդ մարդուն վարձքը. ամբողջ տասնուշինդ որ աշխատցուց—ածուները փորել տվագի... Մի՞թե չդա որենք և, Յես պարզ կլսելի ավագակ հորդ խոսքերը, թե «Հերդինձի պարտք ուներ, չիմարած մեռավ...»: Հապա արդ պիսի վերաբերմունքի հետ մի՞թե կարելի յե հաշտվիլ Յես Հայրոյի հոր ունեցած «պարտք»—ին ալ չեմ հավատար, և կրոնմ, վոր հայրդ ամենապպվելի գաղատին մեկն և:

— Գաղանը դո՞ւք եք, աղքատ չներ: Վերեժուհին իբեն կորցրել ե այդ անսպասելի միջադեպից և չգիտեն, թե ի՞նչ դիբք ընդունի, ի՞նչ ասի: Սեթն այլես չի պատասխանում. Նա, նրանց թողած, արագ—արագ առաջ է անցնում և շուտով անհետանում պողոսայի կիսախափարում:

ՊՂՏԾՈՐՎՈՒՄ Ե ԼՃԱԿԸ

Պիրկ ձգած ելեկտրալարի պես ուղիղ և այն խճուղին, վոր Քաղաքամիջից զեղի լճակն է յերկարում:

Սեթն ու իր ընկերները հաղիվ են իրենց յետեր թողել վերջին հողաշեն տնակները, յերբ ողբ գնալով լեցվում ե գորտերի խուճապային կրկուցով:

Խճուղու աջ ու ձախը իր մամռապատ թեվերը փուելով, նստել ե հնամյա ճահճերը, ուր եղեղների անտառը սփափում ու սուլում է չար:

Վայրի բաղերի յերածները, մեկ ել տեսար, մաղամուրծ դուրս են նետվում արս կամ այն խիտ յեղեղնու տից և սլանում զեղի ճահճի հեռավոր ու անմատչելի խորքերը: Բաղերի փախուստը Հաճախ փետուներ ե թողնում, վորոնք ողում պարուրածե պտույտներ դորձելով, իջնում—թաղնվում են նույն յեղեղնուափ ծոցում, ուր վորսորդների չները դեռևս թպրտացող բարերին են հետապնդում:

Վորարդական հրացանի յուրաքանչյուր պայմանի վրա խկոնյան լուսմ և գորտերի աշխարհը, բայց մի յերկու ըսովե անց նորից կրկուց—ավելի խենթ ու կատաղի:

Խճուղին կտրվում է, և լճակի ավագն սկսում է խշալ այգեստանցի պատանիների վրտների տակ:

Սեթը թեև Հաճախ և լողանալու գալիս, բայց ամեն անզամ, յերբ ազի ող է չնչում, Հաճակվում ն գումաքարնակի ինչ—վոր հույզերով, վորոնք և՝ զուրեկան ևն, և յերկուողալի:

Ողոսուսան անամագ ու բիլ յերկինքն արևի նարքանը ըրն և քամում լնի ալյակներին, վորոնք իրար դրկած:

նազածումի խաղով դնում-ձուլում են հորիզոնին, ուր միջորեն իր նուրբ մանիշակագույն քողի միրաժն ե ծածառում: Հեռվում, հորիզոնի մի կետին կծկվել ե դուշ սիլվետն Առթամարի, վորի հեքիաթային մենությունն ասես փոշեթաթավ աղոթքներ և մրմնջում:

Լճակի վողջ յերկայնքն, մանր ավաղի վրա վրաւվել են նեղքերի պես սև յերեխաներ ու պատանիներ: Նրանց մի մասը լողալու մքցում ե կատարում խորքերը զնալով, իսկ մյուս մասը վիչած վարտիկների վրա պառկած, լողալու փորձեր և անում ափամերձ ջրերում:

Սեթն այր որը ջուր մանելու վոչ մի տրամադրություն չունի: Նա անփութորեն ձգվել է ավաղին և աշխացք հեռուն՝ անորոշ մի կետի հանած նայում և անթուրթ... Միքամի նոսրացող քանացքից հովի թեհրով զայիս են մայիսյան թիթեռների պես նուրբ ու զունեղ հուրդեր, զալիս-նստում են իր սրտի զգայնիկ լրաբերին և թթվում անձայն: «Սեթ, Սեթ» ասես կըրկին լսում ե նա իր անունը... «Ե՞նչ բյուրեղային եր հնչում Վրեժուսու ձայնը, յերբ կանչում եր ինձ»: Յեկ Սեթն անդրադառնարով այդ սառափառվա անակնկար հանդիպմանը, մտքով կամացուկ շրջում ե իր հիշողության գաւառերը կանաչ և սկսում մեկ առ մեկ խնամել սիրո այն բուր ծաղիկները, վոր Վրեժուսին եր ցանել. խնամում ե զգուշ և ծծում նրանց բույրն աբրուցիչ:

Վերջին ամիսներին Վրեժուսու զլուխն իր շաղանակույն մաղերով ու ծովակապույտ, պայծառ աշքերով հաճախ և պատկերանում Սեթի յերեակայտության յերկնագույն կտավին, վորից անզուսպ ժպտում են նրան՝ հասուն խաղողի պես պրկած շրթները:

Ամեն անգամ, յերբ կյանքի առորյան հասնում— ջնջում ե այդ շաղանակապույն զլիսի պատրանքը, Սեթ զգում ե անհուն կակիծ. նրան թվում ե, թե, ուր վոր և, անեյանայու յե կյանքի իմաստը:

Սակայն անծանոթ ու համառ մի ուժ Սեթին դուրս է քըռեմ տնից՝ դեպի այն թաղը, ուր զինեկույն գըռնից ներս՝ Վրեժուսին և ապրում:

Ահա և այդ թաղը:

Փակ և զինեկույն գըռը:

